Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՅԵՎ ԲՐԻԳԱԴԱՅԻՆ ՊԱՏԻ
ԹԵՐԹԵՐԻ ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ ՀԵՌԱԿԱ ԴԱՍԸՆ
ԹԱՑՆԵՐ

# ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆԱՄԱԿ

## ՀԵՌԱԿԱՅՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

07
Մ-45

ԿԿԿ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
«ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ»

ՅԵՐԵՎԱՆ 1937

37-Ա
2789
23 JUN 2009

Պատվեր № 23 Գլավլիտ № 383
Հանձնված է արտադրության 27-ին մայիսի 1937 թ.
Ստորագրված է տպագրելու 2-ին հունիսի 1937 թ.

«Խորհրդային Հայաստան»-ի հրատ. տպարան, Երևան

## ՇՐՋԱՆԱՅԻՆ ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

Կոլտնտեսային և բրիգադային պատի թերթերի խմբագիրների հեռակա ուսուցման դասընթացների աշխատանքներին նոր թափ հաղորդելու, ինչպես նաև ուսուցման առաջին կիսամյակի արդյունքները պարզելու և ամփոփելու նպատակով հուլիսի 15—30-ը անց է կացվելու հեռակայողների առաջին քննություն:

Քննությունները հաջող կազմակերպելու համար անհրաժեշտ է կատարել լուրջ նախապատրաստական աշխատանք:

Շրջանային այն թերթերը, վորոնք մինչև այսոր պահանջվող քանակությամբ կոնսուլտացիաներ չեն կազմակերպել, մինչ քննությունները պետք է կազմակերպեն կոնսուլտացիաներ, և յուրաքանչյուր հեռակայողին պարզաբանեն նրան անհասկանալի մնացած հարցերը:

Քննությունների մասին առնվազն յերկու շաբաթ առաջ պետք է իրազեկ դարձնել հեռակայողներին, վորպեսզի նրանք հնարավորություն ունենան նախապատրաստվելու:

Անհրաժեշտ է շրջանային թերթում նյութեր տպագրել քննությունները նախապատրաստելու, հեռակա

26.06.2013 14903

ուսուցման հաջողությունների և թերությունների մասին, այդ հարցերի վրա բևեռելով հեռակայողների ուշադրությունը:

Քննությունների կարգը հետևյալն է՝

1. Հեռակայողը քննություն է տալիս այն առաջադրանքներից, վոր նա ուսումնասիրել է:

2. Քննությունը կատարվում է անհատորեն.

3. Քննող հանձնաժողովի նախագահն է շրջանային թերթի խմբագիրը, իսկ հանձնաժողովի յերկու անդամները պետք է վերցնել կուսշրջկոմից և լուսբաժնից:

4. Յուրաքանչյուր հեռակայողի քննելիս պետք է տալ համապատասխան գնահատական թվանշաններով (2, 3, 4, 5) ըստ առանձին առաջադրանքների:

Հեռակայողներին քննելիս և գնահատական տալիս պետք է անպայման հաշվի առնել նաև նրա կատարած աշխատանքը պատի թերթում (պատի թերթի կանոնավոր լույս ընծայումը, նրա բովանդակության բարձրացումը, քաղաքականապես հագեցված լինելը, և այլն): Այդ տեսակետից անհրաժեշտ է մինչ քննությունները ստուգել և պարզել, թե հեռակայողն ինչ չափով է մասնակցում պատի թերթի աշխատանքներին, ինչպես է նա պայքարում լավ պատի թերթ ունենալու համար:

Հեռակայողի քննության գնահատականը շատ մաքուր ձևով պետք է գրվի հեռակայողի քննության գրքույկի մեջ և հանձնվի իրեն, իսկ քննությունների արդյունքների մասին յեղած նյութերը պետք է պահել շրջանային թերթի խմբագրությունում:



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀՍՍՌ-Арм.ССР им. А. Мясникяна ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.
59585-66

Հեռակայողի քննության գրքույկը պետք է լրացնել հետևյալ կերպ. —

Գրքույկի առաջին եջում յեղած հարցերը պարզ են, միայն պետք է հիշել, վոր 4-րդ հարցին (կոլտնտեսութ.) պետք է պատասխանել նշելով գյուղի անունը, վորտեղ գտնվում է կոլտնտեսությունը: 6-րդ հարցին (դասընթաց՝ ընդունվել է) պետք է պատասխանել այսպես՝ 1936—1937 թ.:

Յերկրորդ եջում նշումներ են կատարվում, յերբ հեռակայողը հաճախում է կոնսուլտացիային: Հետևաբար հեռակայողը կոնսուլտացիայի գալիս, իր հետ պետք է ունենա իր քննության գրքույկը, վորպեսզի կոնսուլտանտը նշումներ անի նրա մեջ:

Գրքույկի 3-րդ եջում նշվում է հեռակայողի առաջադիմությունը, այսինքն տրվում են գնահատականները (թվանշաններով) ըստ առանձին առաջադրանքների:

Այս տարի հեռակայողներին տրվելու յե նաև մի առաջադրանք՝ հայոց լեզվի մասին: Նկատի առնելով այդ առաջադրանքի ծավալի մեծությունը, այն բաժանված է լինելու 8 մասերի (դասերի): Հետևապես այդ առաջադրանքի համար պետք է կազմակերպել վոչ թե 1—2 կոնսուլտացիա, այլ առնվազն 4—5 կոնսուլտացիա:

Այդ առաջադրանքի ամեն մի դասի համար հեռակայողին պետք է տալ առանձին գնահատական, այդ նպատակով գրքույկի «մայրենի լեզու» բաժնում նշված են 1–8 թվանշաններ: Հենց դրանց կողքին (յերկ-

րորդ սյունակում) պետք է գրել հեռակայողի գնա-
հատականներն ըստ առանձին դասերի:
Գրքույկի նույն էջի «լրագրային աշխատանքի
պրակտիկա» բաժնում գրվում են հեռակայողի գնա-
հատականները ըստ առանձին առաջադրանքների:
Նշված 1–16 թվանշանները ցույց են տալիս առաջա-
դրանքների №-ները, վորոնց կողքին (յերկրորդ սյու-
նակում) պետք է գրվի գնահատականը: Այսպես օրի-
նակ «Բոլշևիկյան մամուլը վորպես սոցիալիստական
շինարարության զենք» առաջադրանքը համարվում է
առաջինը, հետևապես այդ առաջադրանքից հեռակա-
յողի ստացած գնահատականը պետք է գրել 1 թվա-
նշանի կողքին, այսինքն յերկրորդ սյունակում:

Նույնը պիտի կատարել նաև մյուս առաջա-
դրանքների նկատմամբ. հեռակայողի ստացած ընդ-
հանուր գնահատականն ուսումնական տարվա առաջին
կիսամյակի առթիվ պետք է գրվի 3-րդ էջի ներքե-
վում, ուր տրված է համապատասխան հարցը:

Ինչպես հայտնի յե, մինչև այսոր մեր բոլոր
շրջաններում հեռակայողների մի շարք կոնսուլտացիա-
ներ են կազմակերպվել: Դրանց մասին նույնպես
պետք է նշումներ կատարել հեռակայողների գրքույկ-
ներում, վորպեսզի պարզ լինի, թե յուրաքանչյուր
հեռակայող ուսման տարվա սկզբից քանի անգամ է
մասնակցել կոնսուլտացիայի:

Գրքույկները հեռակայողներին պիտի հանձնել
առանց ուշացնելու: Հենց գրքույկը հեռակայողներին
հանձնելիս պետք է նրա մեջ նշումներ կատարել ան-



ցած կոնսուլտացիաների մասին, յեթե հեռակայողը
իրոք մասնակցել է կոնսուլտացիաներին:

Հեռակայողների քննությունը լուրջ և պատասխա-
նատու գործ է: Այդ աշխատանքը պետք է սկսել և
ավարտել բոլշևիկյան կազմակերպվածությամբ: Ամ-
բողջ աշխատանքի հիմքում պետք է դնել կոլտնտեսու-
թյուններում բոլշևիկյան մարտական մամուլ և դրա
համար քաղաքականապես կոփված կադր ստեղծելու
լոզունգը:

Ի տ. «Խ. Հ.»-ի պատ. խմբագրի

**Մ. ԴԱՎԹՅԱՆ**

Հեռակա դասընթացների ղեկավար՝

**Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

ՀՀ Ազգային գրադարան
NL0142752
ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
Ա. Մյասնիկյանի անվ.

14903

ՏՐՎՈՒՄ Է ՁՐԻ

# МЕТОДИЧЕСКОЕ ПИСЬМО

## Об организации первого зачета заочников

Издательство ЦК КП(б) А «Хорурдаин Айастан»
Ереван 1937 г.